

ԴԱՍՍԱԿԱՆ  
ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐԸ

# Դժուարություններ

- 1) Բառասկիզբի յ եւ հ տառերը
- 2) Բառամէջի ե եւ է տառերը
- 3) Բառամէջի օ տառը
- 4) գ/ք, ք/փ, ց/ձ, չ/ջ, դ/թ տառերը



ա, ե եւ ի ձայնաւորներէն յետոյ երբ վ լսենք, լ կը  
գրենք:

Օրինակ՝ աւան, աւարտել, աւել, տերել, քաւարար,  
ձել, հելալ, եղաւ, տեսաւ, կարելոր, անձրել

ի տառին եւ ձայնաւորի մը միջեւ երբ վ լսենք, լ կը  
գրենք:

Օրինակ՝ հիւանդ, դիւանապետ, ճիւադ:

Բառավերջին, ի տառէն ետք երբ Վ կը  
լսենք, ւ կը գրենք:

Օրինակ՝ թիւ, հաշիւ, պատիւ, անիւ, կռիւ,  
առթիւ:

Բաղաձայնէ մը առաջ երբ ի եւ լ տառերը  
տեսնենք, բոլորովին այլ նշանակութիւն  
կ'ունենան:

Օրինակ՝ արիւն, հիւր, ճիւղ, նիւթ:

նւ-ն վ-ի արժէքով

# Կը գործածուի՝

ա, ե, է, ի, ո ձայնաւորներէն առաջ  
քաղաձայններէն եւ յ կիսաձայնէն ետք

Օրինակ՝ հարուած, նայուածք, նուէր,  
հաշուապահ, պատուէր, պատուիրան,  
ստուեր, քուէարկել, թուաբանութիւն,  
հաշուել, բանուոր:



## Բացառութիւններ

Բարդ բառերու մէջ երբ երկրորդ բառը վ-ով  
կը սկսի, վ կը մնայ:

կառավարել (կառք + վարել)

լուսավառ (լոյս + վառել)

կարեւել (կարի + վերք)

The background features a vertical green bar on the left side. The top of this bar contains a series of white concentric circles. To the right of the green bar, there is a light blue curved shape at the top. The bottom of the green bar is divided into two triangular sections: a larger pink one on the left and a smaller brown one on the right.

**Է տառի ն ուղղագրութիւնը**

Բառավերջին երբ է կը լսենք, է կը  
գրենք: Բառ մը երբէք ե-ով չի  
վերջանար:

Օրինակ՝ գրեթէ, կը տեսնէ, Կարինէ:

Բացառական հոլովի վերջաւորութիւնը է-ով  
կը գրուի.

Օրինակ՝ սենեակէն, քաղաքէն, դպրոցէն,  
արդէն:

# Կան ածանցներ որոնք է-ով կը գրուին:

## Գոց սորվիլ:

-արէն՝ ջինարէն  
-երէն՝ հայերէն  
-աւետ՝ հոտաւետ  
-գետ՝ մասնագետ  
-եղէն՝ անուշեղէն  
-էն՝ պատճէն  
-էք՝ արժէք  
-պէս՝ այսպէս  
-տէր՝ անտէր

-կետ՝ վերջակետ  
-շէն՝ Հայաշէն  
-մետ՝ հակամետ  
-մէջ՝ մարդամէջ  
-դէմ՝ անդէմ  
-դէպ՝ հանդէպ  
-օրէն՝ տնօրէն  
-վէպ՝ նորավէպ  
-կէզ՝ հրկէզ

# Հետեւեալ յատուկ անունները է-ով կը գրուին

-էն՝ Արմէն, Արսէն, Չաւէն, Խորէն, Ռուբէն

-գէն՝ Բարգէն, Վիգէն, Վազգէն, Գուրգէն

-ել՝ Գաբրիէլ, Դանիէլ, Միքայէլ, Ռափայէլ,

Զապէլ

-էս՝ Յովհաննէս, Մովսէս, Ներսէս, Արտաշէս

-էոս՝ Թադէոս, Բարթողոմէոս

Ինչպէս նաեւ Անդրէաս, Նազարէթ, Յովսէփ

## Ամէն քառք

Երբ առանձին արմատ է, է-ով կը գրուի:  
Օր.՝ ամէն մարդ, ամէն անգամ

Ամէնը ե-ով կը գրուի երբ որակական  
ածականի կը վերածուի:

Օր.՝ ամենալաւ, ամենահամով, ամենասիրած

Երբ բառի մը մէջ է կը լսուի եւ այդ է-ն  
կարողութիւնն ունի ի-ի հնչիւնափոխուելու,  
ուրեմն է-ով կը գրուի:

սէր - սիրել

վերք - վիրաւոր

կէս - կիսել

ակնդէտ - դիտել

տգէտ - գիտութիւն

զէնք - զինուոր

պէտք - պիտի

օրէնք - օրինաւոր

հանդէս - հանդիսաւոր

հանդէպ - հանդիպիլ

տէր - տիրոջ

շէնք - շինութիւն

դէմ - դիմաց

նուէր - նուիրել

պարտէզ - պարտիզպան

հրաւէր - հրաւիրել

ձէթ - ձիթապտուղ

արեւակէզ - կիզել

չէզոք - չի

մէջ - միջին

գէր - գիրուկ

դէմք - դիմագիծ



ոյ, եա եւ եօ-ի ուղղագրութիւնները



Բառի մը մէջ երբ ույ կը լսենք, ոյ կը գրենք:


Օրինակ՝ լոյս, բոյս, յոյս, քոյր, նոյն

Բառի մը մէջ երբ եա կը լսենք, եա կը գրենք:

Օրինակ՝ դայեակ, արեան, յաւիտեան,  
Վարդանեան

Բառի մը մէջ երբ եօ կը լսենք, եօ կը  
գրենք:

Օրինակ՝ եօթը, արդեօք,  
ընտանեօք





Բառավերջի ու եւ ա  
տառերը


# Բառավերջի ա եւ ո տառերէն էտք միշտ յ մը պէտք է դրուի:

Օրինակ՝ արքայ, յետոյ, քահանայ,  
տեսայ, կը խաղայ:

## Բացառութիւններ՝

Հրամայական եղանակի եզակի երկրորդ դեմքը՝ խնդա՛, գնա՛  
Յատուկ անունները՝ Ամերիկա, Գերմանիա, Սեդա (բացի եթէ  
սեռական հոլով է՝ Վանայ, Պոլսոյ)

Հետեւեալ բառերը՝ այո, հիմա, ապա, հա, ահա, սա



հ եւ յ տառերը

Աստուածաշնչեան անունները որոնք J  
տառով կը սկսին, Յ-ով կը գրուին

Jésus - Յիսուս

Jacques - Յակոբ

Joseph - Յովսէփ

Japhet - Յաբէթ

Jean - Յովհաննէս

Joachim - Յովակիմ

Jonathan - Յովնաթան

Judas - Յուդա

Judith - Յուդիթ

Ուրիշ բառեր՝

janvier - յունուար

juin - յունիս

juillet - յուլիս

jasmine - յասմիկ

jade - յասմկաքար



## Յ տառով սկսող բառերը գոց սորվիլ


Բառասկիզբին բաղաձայնէն առաջ երբ **հ** կը լսուի, ընդհանրապէս **հ** կը գրուի բացի յդել, յդի, յստակ, յդկել, յդփանալ:

## յ-ով սկսող բառերու ցանկ մը (մօտ 100 բառ)

Յաճախ, յայտնի, յանդիմանել, յանկարծ, յանցանք, յաջող, յատակ, յատուկ, յարաբերութիւն, յարգել, յարկ (étage), յաւերժ, յաւէտ, յարձակիլ, յարմար, յաւելեալ, յարութիւն, յափշտակել, յեղափոխութիւն, յետոյ, յիմար, յիսուն, յիշել, յոյն, յոյս, յովազ, յօդուած, յօժար, յօնք, յօրանջել, յօրինել:



o ԽԱՌԻ



Բառասկիզբին երբ օ կը լսենք, օ կը գրենք:  
Օրինակ՝ օղ, օր, օղ, օգնել, օրինակ, օտար

Բացառությամբ՝

Ով, ովկիանոս, Ովսաննայ

Ծանոթ.

ով-ը յունարենի oméga-ին համարժեքն է (ω)

Յովսէփ - Լωσήφ

Մովսէս - Μωσής

Թովմաս - Θωμάς

Օ հնչիւնով վերջացող անունները օ-ով կը գրենք  
Օրինակ՝ Կարօ, Սիամանթօ, Դրօ, Թորոնթօ:

Երբ այս անունները կը հոլովուին, օ-ն ո կը  
դառնայ, եւ յ մը կաւելցուի  
Օրինակ՝ Կարոյին, Սիամանթոյի, եւ այլն:

Երբ այս անունները ն յօդը կ'առնեն, օ-ն կը մնայ  
Օրինակ՝ Կարօն, Մարօն:

## Օ-ով գրուող ածանցներ

-օնք զարթօնք

-օրէն՝ մեղսօրէն

-օն՝ ծամօն, կտրօն (իսկ օտար բառերը, ո-ով թատրոն, կեդրոն, պարոն, կանոն, ամբիոն)

## Ու-ով գրուող ածանցներ

-ոտ աղտոտ

-ոտի՝ սնոտի

-որդ որսորդ

-ոց դպրոց

-ովի ազգովի

## Բացառութիւններ

աղօտ, համառօտ, առաւօտ,  
կարճառօտ

# Օ տառը պարունակող բառերը գոց սորվիլ

ակու, աղօթք, ամօթ, ծանօթ, անօթի, արտօնել, դրօշ, զբօսանք,  
գօրք, խօսք, ծանօթ, կարօտ, մօտ, թօթափել, կօշիկ, տօթ, ցօղ,  
քօղ, նարօտ, պաշտօն, զգօն, թօթուել, եւ այլն:

Ծանօթ.

Երբ օ տառը գոյութիւն չունէր, աւ երկբարբառը կը գործածուէր՝  
ակաւս, աղաւթք, ամաւթ, ծանաւթ:



Ուրիշ օրէնքներ

ւք օրէնքը

բամբասել, խումբ, կաղամբ, թմբուկ, Համբարձում,  
ըմբռշխնել, ճամբել, սմբուկ

ղք օրէնքը

աղբ, աղբիւր, եղբայր, ողբ, բողբոջ

գք օրէնքը

գբաղում, գբօսանք, սկիգբ

ս տառը պ եւ փ բաղաձայններէն առաջ կու գայ

սպասել, սփիւռք, սպիտակ, ասպետ

## Փ եւ ք տառերը

Ընդհանրապէս փ-ը բնիկ հայերէն բառերու եւ ոչ սեմական լեզուներէ փոխառութիւններու մէջ կը գործածուի:

Օրինակ՝ ափ, ափսէ, ափսոս, գաղափար, թափ, լափել, ծափ, չափ, փափուկ, ամփոփ, Ծոփք, սփոփել, տրոփել, եփել, Եփրեմ, Եփրատ, շերեփ, սեփական, թուփ, խուփ, տուփ

Բ տառը ընդհանրապէս սեմական ծագում ունեցող փոխառութիւններէն կու գայ. օրինակ՝ Աբել, Բել, արաբ, Աբգար, Աբրահամ, Բաբգէն, խաբել (խաբուսիկ), շաբաթ, Յակոբ, Սերոբ:



## նգ օրէնքը

անգամ, արձագանգ, գանգատ, եղունգ, զանգակ,  
թանգարան, նահանգ, սրինգ, վարունգ: Կարգ մը բառերու  
մէջ ն-էն ետք եկող ք-ն ածանց է՝ գէնք (գինել), կեանք  
(կենարար), հանք (հանել), ջանք (ջանալ), վանք (վանական)

## զգ օրէնքը

ազգ, զգալ, զգեստ, զգոյշ, Վազգէն

ս տառը կ եւ ք բաղաձայններէն առաջ կու գայ  
սկսիլ, սկիզբ, հսկայ, հսկիչ, սքանչելի

## զք օրէնքը

զքաղում, զքօսանք, սկիզբ

## ըգ օրէնքը

արգանդ, արգելք, բուրգ, գիրգ, գորգ, Գուրգէն, երգ,  
թարգմանիչ, միրգ, յարգել, Սարգիս: Բացառութիւններ՝  
արքայ, արքեպիսկոպոս, թուրք, հերքել, հետաքրքիր,  
քրքիջ

Կարգ մը բառերու մէջ **ր**-էն ետք եկող **ք**-ն ածանց է, այդ  
պարագային **ք**-ն **ք** կը մնայ՝

բերք (բերրի), գիրք (գրական), դիրք (դրութիւն), շարք  
(շարել), վերք (վիրաւոր)

ոն օրէնքը

բռնել, առնել, զառնել, լեռներ, դռներ


ƒ/ψ

q/ƒ

η/ρ

Δ/g

Σ/ϑ



Բառը ձուկի՞ ձ-ով է թե ցորենի՞ ց-ով  
Բառը գո՞ց ջ-ով է թե քա՞ց չ-ով

Այս հարցումներուն լուծումը պարզ է՝

- 1) Շատ կարդալ
- 2) Արեւելահայերէն տեսահոլովակներ  
մտիկ ընել եւ հնչիւններուն ուշադիր  
ըլլալ

Արեւելահայերը երբ՝

կ կը հնչեն, գ տառն է (օր.՝ գաւաթ)

պ կը հնչեն, ք տառն է (օր.՝ քանալի)

տ կը հնչեն, դ տառն է (օր.՝ դէմք)

ծ կը հնչեն, ձ տառն է (օր.՝ ձու)

ճ կը հնչեն, ջ տառն է (օր.՝ ջուր)

Արեւելահայաստանը ու  
արեւմտահայաստանը հետեւեալ տառերը  
նոյն ձեւով կը հնչեն՝

փ՝ փիղ

ք՝ քար

թ՝ թել

ց՝ ցորեն

չ՝ չամիչ

Շնորհակալություն